

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՐՈՍՅԱՆ ՎԱՐԵ ՀԱՍԼԵՏԻ

ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ ՈՒ ՀՈԳԵԿՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽՐԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(XII Դ. ՎԵՐՁ - XIV Դ. ՍԿԻԶԲ)

Է.00.01 «Հայրոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ, Շահնազարյան Ա. Ի.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր,
Մաթևոսյան Կ. Ա.

պատմական գիտությունների թեկնածու,
Ալեքսանյան Վ. Ա.

Առաջատար կազմակերպություն

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. մայիսի 20-ին ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՒԻ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. ապրիլի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Զ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒ ԲՈՒԿԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՄՈՒԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Հայոց պատմագիտության, մասնավորապես միջնադարագիտության, հիմնասնդիրներից է աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների համապարփակ ուսումնասիրությունը: Այդ փոխհարաբերություններն առանձնահատուկ են նրանով, որ հավասարապես վերաբերում են հայ ժողովրդի ինչպես քաղաքական, այնպես էլ հոգևոր-եկեղեցական պատմությանը: Ղա, թերևս, պայմանավորված է նրանով, որ միջնադարում, մասնավորապես զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում, աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները սերտորեն փոխկապակցված էին: Եկեղեցին հոգևոր իշխանության կրողը լինելով հանդերձ, հատկապես պետականության բացակայության պայմաններում լայնորեն ներգրավված էր երկրի քաղաքական գործընթացներում: Ղա լավագույնս արտահայտվում էր հասարակական հարաբերությունների կարգավորման գործում եկեղեցու ծանրակշիռ մասնակցությամբ, որին նպաստում էր դատական լայն լիազորություններով օժտված լինելը: Քննվող ժամանակաշրջանը բնորոշվում է հայ ժողովրդի քաղաքական կյանքի վերելքներով և վայրէջքներով, որոնց ընթացքում Հայոց եկեղեցին լավագույնս իրականացրեց հայրենի աշխարհիկ իշխանությունների ոչ միայն գաղափարական-քաղաքական, այլև տնտեսական հենարանի լայն գործառնությունը: Բացի այդ, միջնադարի միջազգային հարաբերություններում կրոնը ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական ծանրակշիռ գործոն էր, և այդ պայմաններում քրիստոնյա աշխարհում Հայ Առաքելական եկեղեցին իր անկախ կարգավիճակով մեծապես ընդգծում էր հայրենի աշխարհիկ իշխանության քաղաքական ինքնուրույնությունը: Մինչույն ժամանակ, հոգևոր շրջանակներում արմատացած էր այն համոզումը, որ ազգն առաջնորդող գլխավոր ուժն աշխարհիկ բարձրագույն իշխանությունն է: Ավելին, վերջինս հանդիսանում էր եկեղեցու բարեկեցության գլխավոր երաշխավորը: Ահա սրանք էին այն ընդհանուր հիմքերը, որոնց վրա կառուցվում էին նրանց բազմաշերտ փոխհարաբերությունները:

Խնդրո՞ւ առարկա ժամանակաշրջանում հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը, նկատի առնելով մեր օրերում Հայոց եկեղեցու առջև ծառայած խնդիրները, ինչպես նաև հայասպահականությանն ուղղված նարտահրավերները, խիստ արդիական է: Եթե աստեմախոսությունն ընդգրկող ժամանակաշրջանում այդպիսիք իույն և լատին եկեղեցիների փորձերն էին դիմափետելու հայոց ինքնությունը բնորոշող կարևոր հատկանիշներից մեկը՝ դավանական ինքնուրույնությունը, ապա այդպիսիք այսօր տարատեսակ աղանդներն ու քրիստոնեական տարաբնույթ ուղղություններն ու հոսանքներն են: Այս համատեքստում անցյալի փորձի, այն է՝ նման նարտահրավերների դեմ ներկայացվող ժամանակաշրջանում հայ

աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների համատեղ պայքարի ուսումնասիրությունն այժմեական է և ուսանելի:

ԱՄՏԱՆՈՒԹՅԱՆ ՆՄՍԱԿԸ ՈՒ ԽՆԻՈՒՄԵՐԸ:

Անտեմափոսության նպատակն է աղբյուրների և մասնագիտական գրականության քննախույզ ուսումնասիրման հիման վրա պարզաբանել հետևյալ հիմնախնդիրները.

- Վեր հանել քննվող ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընացների ազդեցությունը հոգևոր իշխանության և, մասնավորապես, եկեղեցական նվիրատվության վրա:
- Բացահայտել աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների թե՛ կառուցվածքային և թե՛ գործառութային ընդհանրությունները:
- Վեր հանել Հայոց եկեղեցու նպատող պետականության դիրքերի ամրապնդմանը:
- ճշտել պարոնտերության ինստիտուտի ձևավորման ժամանակագրական սահմանները, դրա զարգացմանը նպաստած գործոնները և պարոնության իրավունքի բազմաշերտ դրսևորումները:
- Բնել պարոնտերության ինստիտուտի և եկեղեցու փոխկապակցվածությունը, ինչպես նաև հոգևոր իշխանության կողմից պարոնության իրավունքի ձեռքբերումը:
- Արժևորել եկեղեցական ժողովների դերն ինչպես աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում, այնպես էլ երկրի հասարակական-քաղաքական կյանքում:
- Բացահայտել Հայոց կաթողիկոսության, Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների և Կիլիկիայի հայկական թագավորության փոխհարաբերությունների առարկան և փաստարկել դրանց կայունացմանն ու դադարեցմանը նպաստած գործոնները:

ԱՄՏԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՂՈՒՄԱԿԱՆ ՀՄՔԵՐԸ:

Անտեմափոսությունը շարադրված է տարբերույթ սկզբնաղբյուրների համադիր քննության, հիմնախնդիրն առնչվող գրականության, ինչպես նաև փաստերի պատմաքննական և պատմահամեմատական վերլուծության սկզբունքի կիրառմամբ:

ԱՄՏԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐՏԱՆԱԿՆԵՐԸ:

Անտեմափոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է XII դ. վերջից XIV դ. սկիզբն ընկած շրջափուլը: Ժամանակագրական նման ընդգրկումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: XII դ. վերջը հայոց պատմության մեջ նշանավորվեց հայության երկու հատվածների (Կիլիկիայում և բուն Հայաստանում) ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ տնտեսական ու հոգևոր-մշակութային վերածնությամբ, որը պայմանավորված էր Կիլիկիայի հայկական թագավորության հռչակմամբ և վրաց Բագրատունիների օգնությամբ Զաքարյանների կողմից հյուսիսարևելյան Հայաստանի ազատագրման շնորհիվ Հայաստանում հայոց պետականության տարրեր կրող իշխանությունների լայն ցանցի ձևավորմամբ: Այդ իրողությունները նոր որակ և բովանդակություն հաղորդեցին աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններին: Սակայն արդեն XIV դ. սկզբին մոնղոլական հյուսիս տիրապետության հետևանքով հայկական այդ իշխանությունները բռնեցին քայքայման ու վերացման ուղին: Բացի այդ, կիլիկյան իշխանությունների լատինամետ քաղաքականությամբ պայմանավորված՝ ըստ էության դադարել էին

փոխարարությունները Հայոց կաթողիկոսության և Հայաստանի ու Կիլիկյայի հայկական թագավորության աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միջև:

ԱՆՏԱՆՈՒՄԻՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՐՈՒՅՅԱԼ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:

Ներկայացվող ուսումնասիրությունն իր ժամանակագրական ընդգրկմամբ և դիտարկվող հարցերի ամբողջությամբ իրականացվում է առաջին անգամ: Անտեմախությունում տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա լուսաբանվել են խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխարարությունների հիմնախնդիրները: Այսպես՝ ներկայացվել է խնդրո առարկա փոխարարություններում կողմերի միջև համակցության ու հակադրության դրսևորումները և դրանք պայմանավորող գործոնները: Վերջիններիս հիման վրա պարբերացվել է Հայոց կաթողիկոսության, Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների և Կիլիկյայի հայկական թագավորության փոխարարությունները:

Անտեմախությունում արված եզրակացությունները կարող են օգտագործվել հայ ժողովրդի՝ ինչպես քաղաքական, այնպես էլ Հայոց եկեղեցու պատմության հատուկ դասընթացներում ու դասագրքերում:

ԱՆՏԱՆՈՒՄԻՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

Անտեմախությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱՄ Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 5 հոդվածներում, հանրապետական ու միջազգային գիտաժողովներում ընթերցած գեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՌԻՄԻՏԱՍԻՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍԻՏԱՆԸ (ԱՐՔՈՒՐՆԵՐԻ ԵՎ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄՈՒԹՅՈՒՆ):

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխարարություններին վերաբերող սկզբնաղբյուրները բաժանվում են չորս խմբի՝ կանոնական նորմերի ժողովածուներ, վիմագիր արձանագրություններ ու ձեռագրերի հիշատակարաններ, կրոնադավանական և պատմական բնույթի երկասիրություններ:

Կանոնական նորմերի ժողովածուների շարքում առաջնային նշանակություն ունի Հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցու VIII դ. կազմած «Կանոնագիրը Հայոցը»¹: «Կանոն» բառով հայոց մեջ բնորոշվել են այն որոշումներն ու գրությունները, որոնք վերաբերել են հասարակական հարաբերությունների այս կամ այն դրսևորումներին՝ միտված լինելով դրանց կարգավորմանը²: Կանոնական ժողովածուի ստեղծումը եղել է ժամանակի հրամայականը: Միտված լինելով օտար տիրապետության պայմաններում հայոց ազգային դիմազօի, դավանական անսղարտության պահպանմանը՝ «Կանոնագիրը Հայոցն» ունեցել է քաղաքացական կարևոր նշանակություն³: Այն կազմված է ինչպես հայկական, այնպես էլ օտար ծագում ունեցող կանոնախմբերից: Դրանց մի մասը եկեղեցական ժողովների, իսկ մյուսը՝

¹ Կանոնագիրը Հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., 1964, հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., 1971:

² Նույն տեղում, հ. Ա, էջ X:

³ Նույն տեղում, էջ XV:

ժամանակի նշանավոր հոգևոր-եկեղեցական գործիչների հեղինակած կանոններն են:

Խնդրո՞ւ առարկա փոխհարաբերությունների ուսումնասիրության տեսանկյունից «Կանոնագիրք Հայոցն» ունի առանձնահատուկ նշանակությունն, քանի որ եղել է այդ հարաբերությունները կարգավորող հիմնական աղբյուրներից մեկը: Ավելին, ամբողջ միջնադարում պահպանելով իր իրավական ուժը, այն լայնորեն օգտագործվել է հետագայում ստեղծված այնպիսի կանոնական ժողովածուներում, ինչպիսիք են Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին» և Սմբատ Սպարապետի «Ղատաստանագիրքը»⁴:

Կանոնական բնույթի հարորդ կարևոր աղբյուրը Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին» է⁵: Հարկ է նշել, որ ստեղծված լինելով ներկայացվող ժամանակաշրջանում՝ «Գիրք դատաստանին» լավագույնս արտացոլում է ժամանակի հասարակական, այդ թվում աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները: Դրանք ներկայացված են ժողովածուի մի շարք հոդվածներում⁶, որոնց միջոցով հեղինակը փորձել է կանոնակարգել այդ երկու իշխանությունների փոխհարաբերությունները՝ նախ և առաջ ուղենշելով նրանց իրավասության սահմանները⁷: Մխիթար Գոշը, լինելով եկեղեցու ինքնուրույնության կողմնակից, դեմ էր աշխարհիկ իշխանությունների կողմից նրա ներքին գործերին միջամտելուն, ուստի, միմյանց չհակադրելով, սահմանազատել է այս երկու իշխանությունների լիազորությունները⁸: «Գիրք դատաստանին», «Կանոնագիրք Հայոցի» նման ազգի ինքնության պահպանման և պետականության վերականգնման նպատակ էր հետապնդում:

Կանոնական բնույթի աղբյուրներից օգտագործել ենք նաև Սմբատ Սպարապետի «Ղատաստանագիրքը»⁹: Այն մասնավորապես խոսակար է եղել Հայաստանում և Կիլիկիայի հայոց թագավորությունում խնդրո՞ւ առարկա փոխհարաբերությունների վերաբերյալ զուգահեռներ անցկացնելիս:

Բնակող ժամանակաշրջանում հասարակական հարաբերությունների կարգավորման գործում առանձնակի կարևոր են ժամանակի հոգևոր-եկեղեցական գործիչների հեղինակած խրատները: Այդ առումով չափազանց կարևոր է Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Դ Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»¹⁰, ինչպես նաև XIII դ. վերջի նշանավոր հոգևոր-եկեղեցական գործիչ Հովհաննես Երզնկացու «Խրատ հասարակաց» երկասիրությունը¹¹: Դրանք կանոնական բնույթի խրատներն են, որոնք զարգացում ապրեցին հատկապես XI-XIII դարերից սկսած: Թեև նշված ժամանակաշրջանում արդեն

⁴ Նույն տեղում, հ. Բ, էջ CXL, CXVII:

⁵ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոյանի, Ե., 1975:

⁶ Նույն տեղում, էջ 26-34, 141-142:

⁷ Նույն տեղում, էջ ԻԷ:

⁸ Սաֆարյան Գ., Մխիթար Գոշի իրավաբաղաբական հայացքները, «Ղատանա-բանասիրական հանդես», 1989, N 4, էջ 37:

⁹ **Смбат Спарает, Судебник, составление текста, перевод с древнеармянского, предсловие и примечания А. Г. Галстяна, Е., 1958.**

¹⁰ Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեսնն Ներսիսի Շնորհալոյ, էջմիածին, 1865 (այսուհետև՝ Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, 1865): Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Բաղդասարյանի, Ե., 1995:

¹¹ Բաղդասարյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Ե., 1977:

իսկ գոյություն ունեին կանոնական բնույթի ժողովածուներ, այնուամենայնիվ, ժամանակի քաղաքական իրավիճակը (Հայաստանում ոչ միայն թագավորական իշխանության, այլ նաև կաթողիկոսական Աթոռի բացակայությունը), նպաստեց խրատական գրությունների զարգացմանը: Այս պայմաններում խրատները դարձան այն լծակները, որոնց շնորհիվ Հայոց եկեղեցին նպաստեց հասարակական հարաբերությունների կարգավորմանը¹²: Հովհաննես Երզնկացու խրատական թղթերից հասկապես արժեքավոր է եկեղյաց գավառի իշխաններին ուղղված թուղթը, որտեղ հեղինակը փորձել է ուղենշել իշխանության շարունակականությունն ապահովող կառավարման սկզբունքները:

Աղբյուրների շարքում հատկապես արժեքավոր են վիմագիր արձանագրությունները: Նկարագրելով գրվելու պահին անմիջապես նախորդած իրադարձությունները՝ դրանք առավել արժանահավատ են: Ատենախոսության մեջ օգտագործված են «Դիվան հայ վիմագրության» շարքի առաջին վեց արակները¹³: Վիմագիր հիշատակություններն առատ նյութ են պարունակում Հայաստանում պարոնտերության ինստիտուտի վերաբերյալ: Վիմագրական վկայությունները թույլ են տալիս ճշգրտելու օրինակ, հայոց մեջ «պատրոն» և «պարոն» տերմինների գործածության ժամանակն ու պոտնախոսած իմաստը: Դրանց միջոցով հնարավոր է լինում խորությամբ ուսումնասիրել վանքերի ու եկեղեցիների նկատմամբ աշխարհիկ իշխանների ունեցած պարոնության իրավունքի բազմաշերտ դրսևորումները: Վիմագիր արձանագրությունները միաժամանակ հայոց կանոնադրական նորմերի իրացման կարևոր միջոց են եղել¹⁴: Ինչպես ստորև կտեսնենք, Սսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնները ևս ստացան վիմագրական արտացոլում: Վիմագրերը, ի տարբերություն կանոնական նորմերի, որոնք գետնի վրա էին ձեռագիր մատյաններում, առավել հասու էին ժողովրդին, ուստի մեծ էր դրանցում նշված կանոնի կիրառելիության արդյունավետությունը¹⁵: Ներկայացվող հարաբերությունների ուսումնասիրման գործում աղբյուրագիտական արժեք ունեն Կ. Ղաֆադարյանի՝ Հաղբատի և Սանահնի վանքերի պատմությանն ու վիմագրությանը նվիրված երկասիրությունները¹⁶, որոնցում ներկայացված են այդ վանքերի վիմագիր արձանագրությունները:

Աղբյուրագիտական արժանահավաստությամբ վիմագրերին չեն զիջում ձեռագրերի հիշատակարանները. «Գրված լինելով պատմվող դեպքերին ականառես ու ականջալուր մարդկանց կողմից, նրանց հաղորդած տեղեկությունները վստահելի են. ժամանակագրական ու պատմական

¹² Նույն տեղում, էջ 48:

¹³ Դիվան հայ վիմագրության, արակ I, կազմեց Հ. Ա. Օրբելի, Ե., 1966: Դիվան հայ վիմագրության արակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Ե., 1960: Դիվան հայ վիմագրության, արակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Ե., 1967: Դիվան հայ վիմագրության, արակ IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Ե., 1973: Դիվան հայ վիմագրության, արակ V, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Ե., 1982: Դիվան հայ վիմագրության, արակ VI, կազմեցին Ա. Ա. Ավագյան, Հռ. Մ. Ջանիդարյան, Ե., 1977:

¹⁴ Ասրգայան Գ., Միջնադարյան կանոնադրական նորմերի վիմագրական արտացոլումները, «Պատմա-բանասիրական հանդես», 2006, N 2, էջ 109-110:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Ղաֆադարյան Կ., Հաղբատ ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Ե., 1963: Նույնի՝ Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957:

անճշտություններ ու սխալներ գրեթե իսպառ բացակայում են հիշատակարաններից», - գրել է Լ. Խաչիկյանը¹⁷: Աստվածաբանությունը շարադրելիս օգտվել ենք ինչպես խնդրո առարկա ժամանակաշրջանի, այնպես էլ XIV և XV դարերի ձեռագրերի հիշատակարաններից¹⁸: Դրանցում ևս առատ նյութ է ամբարված պարունակության ինստիտուտի վերաբերյալ: Հիշատակարանային վկայությունները հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմել ու այս կամ այն բեմական կենտրոնի կարգավիճակի, կաթողիկոսական Աթոռի հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև տվյալ պահին երկրի քաղաքական դրության վերաբերյալ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանն աչքի է ընկնում պատմողական բնույթի այնպիսի կոթողային աղբյուրներով, ինչպիսիք են Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու և Ստեփանոս Օրբելյանի աշխատությունները:

Հայոց XII-XIII դդ. պատմության ուսումնասիրման գործում անգնահատելի արժեք ունի Կիրակոս Գանձակեցու (1203-1271) պատմությունը¹⁹: Հասկապես արժեքավոր են պատմիչի տեղեկությունները Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների վերաբերյալ, դրոնք նա քաղել է Վանական վարդապետի, ցակոք, մեզ չհասած պատմությունից: Կիրակոս Գանձակեցին պատշաճ տեղ է հատկացրել Սսի 1243 թ. եկեղեցական ժողովին, Կոստանդին Ա Բարձրբերցի (1221-1267) կաթողիկոսի խրատական թղթին, ինչպես նաև վերջինիս կողմից Հայաստան ուղարկված կանոնական նորմերին: Պատմիչն անդրադարձել է նաև Կիլիկիայի հայոց Հեթում Ա թագավորի (1226-1270) Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հետ երկիցս ունեցած հանդիպմանը: Կիրակոս Գանձակեցու երկասիրությունն արժեքավոր է նաև նրանով, որ դրանում շատ իրադարձություններ ներկայացված են ականատեսի լավատեսյակությամբ:

Վարդան Արևելցու (1200-1271) պատմությունը²⁰ ևս նշանակալից տեղ ունի XII-XIII դդ. պատմության ուսումնասիրման խնդրում: Սակայն իրադարձությունները համառոտ շարադրելու մեթոդով պայմանավորված՝ պատմիչը մեզ հետաքրքրող հարցերին չի անդրադարձել առավել ընդգրկուն: Վարդան Արևելցին աչքի է ընկել հասարական-քաղաքական, հոգևոր-եկեղեցական լայն գործունեությամբ: Դրա պասլը Փ. Անթապյանի դիպուկ բնութագրմամբ նրա հանդիպումն է մոնղոլ տիրակալ Հուլայիսի իլխանի հետ²¹: Այդ հանդիպման ժամանակ արձարծվում են նաև աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններին վերաբերող հարցեր:

¹⁷ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Ե., 1950, էջ VI:

¹⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., կազմեց Ա. Ա. Մաթևոսյան, Ե., 1988: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ա. Մաթևոսյան, Ե., 1984: Յուլյսեփեան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, (Ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Ե., 1955, մասն Բ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Ե., 1958, մասն Գ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Ե., 1967:

¹⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Սելիք-Օհանջանյանի, Ե., 1961 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի):

²⁰ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862:

²¹ Անթապյան Փ., Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Բ, Ե., 1989, էջ 22:

Սեփանոս Օրբելյանի († 1303) աշխատությունը²² խնդրո առարկա հարաբերությունների ուսումնասիրման համար ունի դժվար գերազնահատելի արժեք: Հիշատակության են արժանի հեղինակի՝ հատկապես Սյունյաց թեմի սքոռակալ լինելու տարիներին վերաբերող վկայությունները, որոնք առատ նյութ են հաղորդում Հայոց կաթողիկոսության և Հայաստանի ու Կիլիկյայի հայկական թագավորության աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների XIII դ. վերջի – XIV դ. սկզբի փոխհարաբերությունների վերաբերյալ: Պատմիչն արժեքավոր տեղեկություններ է հայտնում նաև Հայոց եկեղեցու նվիրապետական աստիճանակազի վերաբերյալ: Օգտագործել ենք նաև Սեփանոս Օրբելյանի՝ հայոց հոգևոր կենտրոն Վաղարշապատի Աբ. Կաթողիկեին նվիրված չափածո երկասիրությունը²³: Այստեղ հեղինակը լավագույնս ներկայացնում է անկախ պետականության բարերար ազդեցությունը երկրի ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ հոգևոր-եկեղեցական կյանքի վրա: Սեփանոս Օրբելյանն այդ հենքի վրա արժեքավոր զուգահեռներ է անցկացնում «Արքայուհու» կերպարով ներկայացող հայոց հոգևոր կենտրոնի՝ անկախության և դրա բացակայության պայմաններում ունեցած վիճակի վերաբերյալ: Այդ երկասիրության մեջ կարմիր թելի պես անցնում է այն գաղափարը, որ եկեղեցու բարեկեցության գլխավոր երաշխավորն անկախ կենտրոնածիօ պետականությունն է:

Պատմողական սկզբնաղբյուրների շարքում արժեքավոր է նաև վրաց XIII դ. անանուն հեղինակ՝ Թամար թագուհու առաջին պատմիչի «Թագակիրների պատմությունն ու զովաբանությունը» աշխատությունը²⁴: Այն հատկապես կարևոր է Հայ ու Վրաց եկեղեցիների ժամանակի փոխհարաբերությունների ուսումնասիրության խնդրում: Հատկապես ուշագրավ է այդ երկասիրությունից հայտնի հայ-վրացական դավանաբանական վեճը, որից հստակ պատկերացում ենք կազմում ոչ միայն Ջաքարե ամիրսպասալարի դավանական պատկանելիության, այլև Հայոց եկեղեցու ավանդները հետևողականորեն պաշտպանելու նրա պատրաստակամության մասին:

Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններին վերաբերող աղբյուրների շարքում կարևոր են հատկապես կրոնադավանական բնույթի աշխատությունները, որոնցում առանձնանում են Մխիթար Գոշի «Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ»²⁵ և Սեփանոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»²⁶ երկասիրությունները: Դրանց

²² Պատմութիւն Եսահանգին Սիսական արարեալ Սեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:

²³ Սեփանոս Օրբելեանի Ողբ ի Ա. Կաթողիկէն, բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով հրատ. Կ. Կոստանեանց, Թիֆլիս, 1885:

²⁴ Картелис Цховреба. История Грузии, История и восхваление венценосцев, под. ред. Р. Метрели, изд. «Артануджи», Тбилиси, 2008.

²⁵ Մխիթար Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, «Գանձասար», Աստուածաբանական հանդէս, հ. 2, Ե., 1996, էջ 336-402:

²⁶ Տեսան Սեփաննոսի Սիւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կոստանդնուպոլիս, 1756:

հեղինակները, լինելով Հայոց եկեղեցու դավանանքի անաղարտության ջերմ պաշտպաններ, գործուն պայքար ծավալեցին ժամանակի քաղկեդոնական ու կաթոլիկամետ ուժերի դեմ, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կոլիկիայում: Հիշյալ աղբյուրներում հիմնավորապես ասպարոցված են թե՛ քաղկեդոնիկ և թե՛ կաթոլիկ եկեղեցիների՝ հայերի և ներկայացվող մեղադրաբանների ու պահանջների անընդունելի և սնանկ լինելը: Կրոնադավանական բնութի սկզբնաղբյուրներից

օգտագործել ենք նաև Սարգիս Շնորհալու²⁷, Ներսես Լամբրոնացու²⁸ Վահրամ Բարունու²⁹ և Գրիգոր Տաթևացու³⁰ աշխատությունները:

Քննվող ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունները յուրահատուկ մեկնաբանվել են ժամանակի առակներում, որտեղ առատ նյութ է ամբարված նաև աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների վերաբերյալ: Ատենախոսության մեջ օգտագործել ենք միջնադարյան երկու հայ խոշոր առակագիրների՝ Մխիթար Գոշի և Վարդան Այգեցու առակների ժողովածուները³¹:

Հայագիտության մեջ հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հարաբերություններին պատշաճ ուշադրություն է արժանացրել Մ. Չամչյանը³²: Սակայն նրա՝ հայ հոգևոր-եկեղեցական դասի որոշ ներկայացուցիչների գործունեությանը տված գնահատականներն ու մեկնաբանությունները վերանայման կարիք ունեն:

Հայոց եկեղեցու, այդ թվում աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների պատմության վերաբերյալ ժանրակշիռ է Մ. Օրմանյանի վաստակը: Նրա աշխատությունները³³ Հայոց եկեղեցու ամբողջական պատմության ուսումնասիրման խնդրում ունեն արժեքավոր նշանակություն: Հետազոտողի համար Մ. Օրմանյանի ձկուն բանածուներն ունեն բանալու նշանակություն, հատկապես այն պարագայում, երբ

²⁷ Մեկնութիւն եօթանց թոթոց կաթողիկեայց արարեալ երանելոյն Սարգսի շնորհալից Վարդապետի՝ հայոց իմաստասիրի և քաջ հռետորի, աշխատասիրութեամբ Տ. Անդրեաս Վարդապետի Նարինեան Ակնեցոյ, Կոստանդինուպօլիս, 1828:

²⁸ Սիրուն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի խոհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խոհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847:

²⁹ Վահրամայ վարդապետի ատենադարի Լեւոնի արքայի Բան ի Յայտնութիւն տեսաւ եւ յօժուն Լեւոնի Գ. արքայի, Յերուսաղէմ, 1875:

³⁰ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993: Նույնի՝ Չմեռան Հատոր, Երուսաղէմ, 1998:

³¹ Մխիթար Գոշ, Առակներ, տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը Է. Պիվազյանի, Ե., 1951: Մառ Ն., ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, բնագիր, Ա. Պետերբուրգ, 1894:

³² Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեսաւ 1784, հ. Գ, Վենետիկ, 1786:

³³ Օրմանեան Մ., Ազգապատում. Հայ Ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001: Նույնի Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպօլիս, 1911:

ներկայացվող փոխհարաբերությունների առարկան վերաբերում է կրոնադավանական բնույթի հիմնախնդիրներին:

Դիտարկվող թեմայի տեսանկյունից արժեքավոր են Գ. Յովսեփյանի աշխատությունները³⁴: Պոռոշյանների կամ Խաղբակյանների իշխանության պատմությանը նվիրված «Խաղբակեանք կամ Պոռոշեանք հայոց պատմութան մէջ» ստվարածավալ ու կոթողային աշխատությունում նա արքյուրագիտական լայն հեցքի վրա փաստորեն ներկայացնում է ոչ միայն Պոռոշյան-Խաղբակյան տան, այլև քննվող ժամանակաշրջանի՝ Հայաստանի հասարակական-քաղաքական ու հոգևոր-մշակութային պատմությունը: Ներկայացվող թեմայի համար կարևոր է հասկապես նրա՝ «Ձագավանից ժողովը» հոդվածը, որտեղ տրված է 1270 թ. կայացած այդ եկեղեցական ժողովի կանոնական որոշումների քննական բնագիրը:

Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների արդյունավետ ուսումնասիրությանը նպաստում են հայ ժողովրդի՝ ավատատիրության շրջանի պատմությանը նվիրված այնպիսի արժեքավոր հետազոտություններ, ինչպիսիք են Ն. Արոնցի³⁵, Յ. Սանանյանի³⁶, Ա. Յովհաննիսյանի³⁷ և Լ. Բաբայանի³⁸ աշխատությունները: Այս կապակցությանը կարևոր են հասկապես ուսումնասիրվող ժամանակաշրջանի հայկական ավատատիրական իշխանությունների պատմությանը նվիրված հետազոտությունները³⁹, որոնցում ավել կամ պակաս չափով անդրադարձ է կատարված նաև մեզ հետաքրքրող փոխհարաբերություններին:

Արեւնախոսությունը շարադրելիս չափազանց օգտակար են եղել Ա. Ավագյանի⁴⁰, Պ. Սուրադյանի⁴¹, Գն. Գրիգորյանի⁴² աշխատությունները:

Հայոց կաթողիկոսության, Հայաստանի ու Կիլիկիայի հայկական թագավորության աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների ուսումնասիրման համար կարևոր արժեք ունեն Գ.

³⁴ Յովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պոռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969: Նույնի՝ Ձագավանից ժողովը, «Շողակաթ», Հայագիտական ժողովածու, գիրք 1, Վաղարշապատ, 1913, էջ 22-46: Նույնի՝ Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Ե., 1983:

³⁵ Արոնց, Ն., Հայաստանը Գուստիհանուսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Ե., 1987:

³⁶ Սանանյան Յ., Երկեր, հ. Գ, Ե., 1977, հ. Դ, Ե., 1981:

³⁷ Յովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Ե., 1957:

³⁸ Բաբայան Լ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Ե., 1964:

³⁹ Խաչիկեան Լ., Արևմտա Օրբելեանների Բուրբելեան ջիւղը, Աշխատութիւններ, հ. Բ, Ե., 1999, էջ 7-33: Նույնի՝ Արուսի հայկական իշխանութիւնը եւ Օրոնորի դարացը, Աշխատութիւններ, հ. Բ, Ե., 1999, էջ 43-121: Ուլուբաքյան Բ., Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում, Ե., 1975: Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելեանների օրոք (XIII-XV դարեր), Ե., 1981: Շահնազարյան Ա., Վախրանյանների իշխանութիւնը, Ե., 1990: Սարգսարյան Յ., Սահկանաբերոցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԺ-ԺԴ դարերում, «Հայկազեան հայագիտական հանդես», հ. ԺԸ, Պլեյրոս, 1998, էջ 9-39:

⁴⁰ Ավագյան Ա., Վիմական արձանագրությունների բառաքննություն, Ե., 1978, նույնի՝ Վիմագրական արարույմներ, Ե., 1986:

⁴¹ **Мурadian П., Культурная деятельность армян-халкедонитов в XI-XIII веках, Е., 1978.** Նույնի՝ Պաանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, «Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը», արակ Ա, Ե., 2008, էջ 319-343:

⁴² Գրիգորյան Գն., Պատրոն տերմինը միջնադարյան հայ արքյուրներում, «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, հ. 6, Ե., 2005, էջ 148-168:

Միքայելյանի⁴³, Յ. Բարթիկյանի⁴⁴, Լ. Խաչերյանի⁴⁵ Լ. Պ. Ջեքիանի⁴⁶, Կ Մաթևոսյանի⁴⁷, Լ. Տեր-Պետրոսյանի⁴⁸, Ա. Բոզոյանի⁴⁹ մեմագրություններն ու հոդվածները:

Հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների ուսումնասիրության ուղղությամբ մեր պատմագիտության մեջ բավական փորձ է կուտակվել: Այդ առումով արժեքավոր են Ա. Սուքիասյանի⁵⁰, Ա. Բոռնազյանի⁵¹, Վ. Վարդանյանի⁵² և Գ. Հարությունյանի⁵³ աշխատությունները: Ասկայն նշված հեղինակների մեծամասնությունը հիմնականում անդրադարձել է Կիլիկիայի հայկական թագավորության աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններին, այն էլ ոչ ամբողջովին, իսկ իսկ Վ. Վարդանյանի աշխատությունն ընդգրկում է մեզ հետաքրքրող փոխհարաբերությունների վաղ միջնադարյան ժամանակափուլը:

Այսպիսով, վերոնշյալ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների մանրակրկիտ հետազոտության միջոցով հնարավոր է լինում լուսաբանել ներկայացվող ժամանակաշրջանի հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների հիմնահարցերը և մեր ուժերի սահմաններում լրացնել եղած բացերը:

ԱՆՏԵՆԱԲՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒԹՎԱԾՔԸ ՈՒ ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ

Անտենափոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 183 էջ:

ԱՆՏԵՆՈՒԹՅՈՒՆՈՒ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է անտենափոսության գիտական նորութը, հիմնավորված են հետազոտության ժամանակագրական սահմանները, սովել է հիմնախնդիրին վերաբերող սկզբնաղբյուրների ու առկա գրականության տեսությունը:

⁴³ Микаелян Г., *История Киликийского Армянского государства*, Е., 1952.

⁴⁴ Բարթիկյան Յ., Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծախքերը, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Ե., 2002, էջ 639-653:

⁴⁵ Խաչերեան Լ., Եսայի Նչեցին եւ Գլածորի համալսարանը (1280-1340 թթ.), Լուս Անճելու, 1988:

⁴⁶ Ջեքիան Պ. Լ., 14-րդ դարի կրոնական վեճերը: Նախաքայլեր Հայոց եկեղեցու հետագա բաժանումների և եկեղեցաբանական կարգավիճակի, «Էջմիածին», 2000, թ. Ա, էջ 106-125:

⁴⁷ Մաթևոսյան Կ., Աճի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997:

⁴⁸ Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2007, հ. Բ, Ե., 2007:

⁴⁹ Բոզոյան Ա., «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Ե., 2000, էջ 80-85:

⁵⁰ Սուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Ե., 1978:

⁵¹ Բոռնազյան Ա., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Ե., 1973:

⁵² Վարդանյան Վ., Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005:

⁵³ Հարությունյան Գ., Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Կիլիկյան Հայաստանում Հեթոն Բ-ի գահակալության առաջին շրջանում (1289-1293), ՀՀ ԳԱԱ «Լրագրեր հասարակական գիտությունների», 2007, N 2, էջ 85-91:

Առաջին գլուխը՝ «ԱՇԽԱՏՈՒԿ ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒՍԱՐԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները», ներկայացված են Հայաստանի՝ սելջուկյան տիրապետությունից ազատագրված երկրամասերում ձևավորված աշխարհիկ իշխանությունները, վերջիններիս ներիշխանական փոփոխարարությունները, ինչպես նաև հոգևոր իշխանությունը բնորոշող գլխավոր հատկանիշները, մասնավորապես Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցը՝ ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկություններով:

XII դ. վերջը և XIII դ. սկիզբը հայոց պատմության մեջ նշանավորվեց Ջաքարյան իշխանական տան գլխավորած ազատամարտերով, որոնց արդյունքում Հայաստանում ձևավորվեցին Ջաքարյանների և նրանց ենթակա իշխանություններ (Վաչուտյաններ, Օրբեյան, Պռոշյան կամ Խաղբակյան և այլն): Նշենք, որ Ջաքարյանների և նրանց հովանավորության տակ գտնվող իշխանությունների փոփոխարարությունները կրում էին գերակատարակայական բնույթ⁵⁴:

Ջաքարյանները ձևավորեցին նաև աշխարհիկ իշխանությունը բնորոշող հաջորդ կարևոր կառույցը՝ վարչական պաշտոնությունը, որտեղ լայնորեն ներգրավված էին նրանց ենթակա իշխանությունների ներկայացուցիչները:

Սակայն XIII դ. երկրում հաստատված մոնղոլական տիրապետությունը, ինչպես նաև դրան զուգահեռ ավատատիրական իշխանությունների միջև ընթացող ներհակությունները, խախտեցին Ջաքարյան Հայաստանի վերը նշված իշխանական բուրգը: Արդյունքում, Ջաքարյաններին ենթակա Օրբեյանները, ինչպես նաև Հասան Ջալալին պատկանող Ներքին Խաչենի իշխանությունը մոնղոլների տիրապետության ժամանակ ստացան Ջաքարյաններից անկախ կարգավիճակ⁵⁵: Վերջիններս էլ, XIII դ. երկրորդ կեսին Օրբեյանների ու Սահկանաբերդցիների հետ մրցակցելով ու թուլանալով, զրկվեցին իրենց նախկին առաջադաս դիրքերից⁵⁶: Արդյունքում, XIV դ. սկզբներին, երբ այլևս չկար առաջադաս կենտրոն, աշխարհիկ իշխանությունները պարփակվեցին իրենց տիրույթների սահմաններում:

Քաղաքական դաշտում տեղի ունեցող վերադասավորումներն իրենց ազդեցությունն ունեցան նաև հոգևոր իշխանության, մասնավորապես եկեղեցու նվիրապետական կառույցի վրա:

Հայոց մեջ հոգևոր իշխանության կրողը Հայ Առաքելական եկեղեցին է՝ ի դեմս հոգևորականության: Վերջինիս իշխանության հիմքերը գալիս են վաղ միջնադարից, երբ հոգևորականությունը, ստանալով ապահովության իրավունք, դասվեց «ազատների» կարգում⁵⁷: Լիներվ հոգևոր կառույց՝ Հայոց եկեղեցին միաժամանակ երկրի խոշոր ավատատերերից էր, ինչն էլ հանդիսանում

⁵⁴ Մարգարյան Հ., Տիրապետող դասակարգը Հայաստանում XII-XIII դարերում, (Նախնական դիտարկումներ), «Պատմա-բանասիրական հանդես», 1990, N 4, էջ 41:

⁵⁵ Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբեյանների օրոք, էջ 73-74: Մանանդյան Հ., Երկեր, հ. Գ, էջ 233: Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 191:

⁵⁶ Մարգարյան Հ., Ռազմաքաղաքական տեղաշարժերը Սերձավոր Արևելքում և հայ ավատատիրական ավազանին ժԲ դարում-ԺԴ դարի առաջին կեսում, պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 1996, էջ 22:

⁵⁷ Կանոնագիրը Հայոց, հ. Բ, էջ 209:

եր հոգևոր իշխանությունը բնորոշող կարևորագույն հատկանիշներից մեկը: Վերջիններիս թվում կարևոր էր հատկապես եկեղեցուն ստրված դատական իշխանությունը⁵⁸, ինչը հնարավորություն էր տալիս հոգևորականությանը լայնորեն մասնակցել երկրի կառավարմանը: Վերոգրյալից զատ, եկեղեցին աշխարհիկ իշխանության նման, ուներ իր իշխանական կառույցը, որպիսին հոգևոր նվիրապետությունն էր: Վերջինիս ձևավորումը համընկավ Հայաստանում ավատատիրական կարգերի հաստատման հետ, ուստի հասարակական հարաբերությունների ավատատիրականացումը խորապես ազդեց եկեղեցական նվիրապետության վրա⁵⁹: Ավատատիրական վարչական կառուցվածքից զատ, եկեղեցին ընդօրինակեց նաև աշխարհիկ իշխանության աստիճանակարգը, որտեղ հստակ դրսևորվեցին դրան բնորոշ գերակա-ստրակայական հարաբերությունները:

Հոգևոր իշխանության նվիրապետական կառույցը ներկայացնելիս հաջորդաբար անդրադարձել ենք դրա առաջին հինգ աստիճանները զբաղեցնող ներկայացուցիչներին (կաթողիկոս, արքեպիսկոպոսներ, մետրոպոլիտներ, եպիսկոպոսներ, քահանաներ), որոնք էլ, ըստ էության, հանդիսանում են այդ իշխանության կրողները:

Հասկանալի է, որ XI դ. երկրորդ կեսի քաղաքական իրադարձությունների հետևանքով Հայոց կաթողիկոսի իշխանությունը կրում է բովանդակային փոփոխություն, որի հետևանքով Հայոց կաթողիկոսության աշխարհագրական («Հայոց Սեծաց»՝ Սեծ Հայք) ընկալումը հետզհետե փոխարինվում է էքնիկականով, և արդեն XII դ. սկսում է օգտագործվել «Ամենայն հայոց» հասկացությունը⁶⁰:

Բացի այդ, քննության է առնված բուն Հայաստանում կաթողիկոսական Վթոռի բացակայության պարագայում Հայոց եկեղեցու հայաստանյան նվիրապետական կառույցում առաջադաս կենտրոնի հարցը:

Երկրորդ ենթազխում՝ «Հայոց եկեղեցու դիրքորոշումը պետական իշխանության նկատմամբ», վեր են հանված աշխարհիկ իշխանության բնույթին, կառավարման ձևերին վերաբերող՝ եկեղեցու կողմից առաջադրված սկզբունքները, ինչպես նաև հոգևոր իշխանության ցուցաբերած նպաստը պետականության դիրքերի ամրապնդմանը:

Հոգևոր իշխանության շրջանում պրնատացած էր այն համոզումը, որ ինչպես ազգի, այնպես էլ եկեղեցու բարեկեցության գլխավոր երաշխավորն աշխարհիկ իշխանությունն է⁶¹:

Հասարակական հարաբերությունների վրա ունեցած իր ծանրակշիռ ազդեցությամբ եկեղեցին մեծապես նպաստում էր աշխարհիկ իշխանության դիրքերի ամրապնդմանը:

Պետականության շարունակականության պահպանման խնդրում հոգևորականությունն առաջնային էր համարում արդար կառավարման

⁵⁸ Հայոց եկեղեցին միջնադարում ղեկավարում էր «Սեծ դատավարություն» գործակալությունը (Փաստոսի Բիզանդացու) Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 56):

⁵⁹ Սանանյան Գ., Երկեր, հ. 7, էջ 285:

⁶⁰ Բոզոյան Ա., նշվ. աշխ., էջ 82-84:

⁶¹ Բարդախյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 204-205:

ապահովվւմը, որը նախ և առաջ պետք է դրսևորվեր Քրիստոնեության և եկեղեցու քարոզած սկզբունքներին աշխարհիկ իշխանությունների հավաստումությամբ:

Հանդես գալով աշխարհիկ իշխանությունների նկատմամբ ժողովրդին ուղղված հնազանդության կոչով՝ եկեղեցին միաժամանակ ընդգծում էր, որ չի պատրաստվում պողպատացնել աշխարհիկ իշխանությունների ցանկացած գործողություն: Սակայն, չունենալով վերջիններիս վրա ազդելու իրավական լծակներ, հոգևորականությունն այդ հարցում առավելապես հենվում էր ժողովրդի շրջանում ունեցած իր գաղափարական ազդեցության վրա: Այս ամենով հանդերձ՝ եկեղեցին, փաստորեն, հանդես էր գալիս որպես զսպող և հակակշռող ուժ՝ աշխարհիկ իշխանության և ժողովրդի փոխհարաբերություններում:

Երրորդ ենթազխում՝ «Պարոնտերության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը», ճշգրտվել են պարոնտերության սաղմնավորման և զարգացման ժամանակագրական սահմանները, վեր հանվել ավատատիրական իշխանություններում աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների զուգակցմանը նպաստած գործոնները, ինչպես նաև բնության են առնվել պարոնտության իրավունքի բազմաշերտ դրսևորումները. հոգևոր հաստատությունների նկատմամբ աշխարհիկ պարոնների տիրական իրավունքների ձեռքբերման միջոցները, դրանց արտահայտման ձևերը, հոգևոր իշխանության կողմից պարոնության իրավունքի յուրացման հանգամանքները:

Ձարգացած ավատատիրության շրջանում եկեղեցական վարչական միավորը համապատասխանեցվեց նախարարություններին փոխարինելու եկած իշխանությունների սահմաններին: Այս գործընթացը սկսվել էր դեռևս վաղ միջնադարից և եկեղեցու կողմից ավատատիրական վարչատնտեսական կառույցի ընդօրինակման հետևանք էր⁶²: Ստեղծված պայմաններում ավատատիրական իշխանություններից յուրաքանչյուրը ձգտում էր իր իշխանության վարչական սահմաններում ձևավորել եկեղեցական թեմ: Այս միտումը բնորոշ էր նաև Ջաքարյան Հայաստանի ավատատիրական իշխանություններին:

Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների սերտաճումն առավել կենսունակ էր դառնում անկախ պետականության բացակայության պայմաններում, որի պոլյունքում շատ ավատատերեր, օգտվելով Հայոց եկեղեցու ապահարկությունից, իրենց տիրույթները նկաճողներին չհանձնելու համար նվիրաբերում էին վանքերին ու եկեղեցիներին: Բացի այդ, վերջիններիս առաջնորդներ էին կարգում իրենց տան ներկայացուցիչներին՝ այսպիսով շարունակելով նվիրաբերած տիրույթների տնօրինումը: Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների զուգակցումը բնորոշ էր Անիի, Վասպուրականի, Խաչենի, Սյունիքի, Երզնկայի, Արտազի և այլ իշխանություններին:

Հարկ է նկատի առնել, որ պարոնության իրավունքը, որն ի սկզբանե բնորոշում էր ավատատերերի վարչաքաղաքական իշխանությունը, ներկայացվող ժամանակաշրջանում միաժամանակ սկսեց հատկորոշել նաև լրանց տիրական իրավունքները գլխավորապես իրենց իշխանության սահմաններում գնտվող եկեղեցիների ու վանքերի նկատմամբ: Սակայն հոգևոր հաստատությունները աշխարհիկ պարոնների լիարժեք սեփականությունը չէին, այլ վերջիններս դրանք

⁶² Արոնց Ն., նշվ. աշխ., էջ 401:

հսկում և հովանավորում էին միայն տիրության իրավունքով⁶³: Բանն այն է, որ կանոնական իրավունքն աշխարհիկ տերերին արգելում էր եկեղեցական հաստատությունները դիտել իբրև սեփական ժառանգություն⁶⁴, քանզի դրանք պատկանում էին Հայոց կաթողիկոսությանը:

Պարոնտերությանը բնորոշ էր նաև եկեղեցական պաշտոնների ժառանգաբար փոխանցման երևույթը, որը լայն տարածում ուներ քննվող ժամանակաշրջանում:

Երկրորդ գլուխը՝ «ԱՇԽԱՐԻԿ ՈՒ ՀՈԳԵԿՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒԽԱՐԱՎԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՆՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Սսի, Լոռիի և Անիի XIII դարակգքի եկեղեցական ժողովները», քննության է առնվել եկեղեցական ժողովների դերն ինչպես հայոց հոգևոր-եկեղեցական, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքում: Բացի այդ, ճշգրտվել են Սսի, Լոռիի և Անիի ժողովների թվականները, ներկայացվել դրանց ընթացքը, ինչպես նաև վերջիններիս համաատքատում անդրադարձ է կատարվել աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններին:

Հայոց եկեղեցին, ծավալելով դատավարական լայն գործունեություն, միաժամանակ երկրի գլխավոր օրինաստեղծ կառույցն էր: Վերջինիս օրենսդրական գործառույթները դրսևորվում էին եկեղեցական ժողովներում, որտեղ էլ, ըստ էության, ստեղծվում և ընդունվում էին հասարակական հարաբերությունները կարգավորող կանոնադրական նորմերը: Հայոց մեծ ժողովներին ի սկզբանե նաանակցել են աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները: Պա ժողովներին տալիս էր օրենսդրական բարձրագույն իշխանության բնույթ⁶⁵, ինչն էլ ժողովական որոշումներին՝ կանոններին, տրանսպարենտ հաղորդում էր պարտադիր իրավական ուժ⁶⁶:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի եկեղեցական ժողովները հրավիրվել են.

ա. Հասարակական, այդ թվում հոգևոր-կրոնական բնույթի խնդիրների քննության և համապատասխան կանոնական որոշումների ընդունման, բ. կաթողիկոսի ընտրության, գ. կաթողիկոսի պրոռազրկման, դ. հունադավան և հռոմեադավան եկեղեցիների հետ միության հարցի քննության կապակցությամբ: Սույն գլխում անդրադարձել ենք վերոգրյալ «ա» կետով նախատեսված ժողովներին (Սսի, Լոռիի և Անիի XIII դարակգքի, Սսի (1243) և Չազավանից (1270) ժողովներ), իսկ մյուսները քննել աստեմախոսության երրորդ գլխում:

Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները Ջաքարյան Հայաստանի XIII դարակգքի պատմության կարևոր դրվագներից են: Սույն ժողովների հրավիրման հիմնական նպատակը Ջաքարե ամիրսպասալարի առաջադրած՝ հայոց բանակում եկեղեցու շարժական սեղանի («ճանապարհի եկեղեցի») կիրառման սովորույթի վերականգնմանը վերաբերող հարցի քննությունն էր: Բանակում «ճանապարհի եկեղեցու» կիրառման իրավունք ստանալու համար Ջաքարե ամիրսպասալարը, իր խոստովանահայր Մխիթար Գռչի խորհրդով, դիմում է

⁶³ Գրիգորյան Գ., Սյունքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Ե., 1973, էջ 69:

⁶⁴ Մխիթար Գռչ, Գիրք դասաստանի, էջ 33:

⁶⁵ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ XVI:

⁶⁶ Սանուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. I, Ե., 1939, էջ 46:

Չայոց կաթողիկոս Գովհաննես Ձ Ստեփան (1203-1221), ինչպես նաև Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Ա-ին (1187-1219): Վերջինիս նախածեռնությամբ էլ 1207 թ. Ստուն հրավիրվում է եկեղեցական ժողով, որը, հավանության արժանացնելով Ջաքարեի դիմումը՝ ընդունում է ութ կետից բաղկացած կանոնական նորմեր և ուղարկում Չայաստան: Դրանց իրագործման նպատակով Ջաքարեն Լոռիում նույն թվականին հրավիրում է եկեղեցական ժողով: Ասկայն Սի կանոնները, որոնց մեջ կային Չայոց եկեղեցու ծիսակարգին հակասող դրույթներ, մերժվում են ժողովական հոգևորականների մի մասի կողմից, ուստի անհրաժեշտություն է առաջանում դրանց հաստատման համար կրկին ժողով հրավիրել, որն այս անգամ տեղի է ունենում Անիում (1207 թ. վերջ կամ 1208 թ. սկիզբ): Այն, ինչպես նախորդը, ևս կանոնական ընթացք չի ունենում:

Երկրորդ ենթադիտում՝ «Սի 1243 թվականի եկեղեցական ժողովի և դրա արձագանքները Չայաստանում», անդրադարձ է կատարվել Սի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնական որոշումների՝ Չայաստանում ստացած կիրառությանը, ինչպես նաև այդ կապակցությամբ 1270 թ. տեղի ունեցած Ձազալանից եկեղեցական ժողովին:

Քննվող ժամանակաշրջանում Չայոց կաթողիկոսության Չայաստանից դուրս գտնվելը, ղփկարացումն էր ամբողջ հայության վրա հայրասպետական իշխանության իրականացումը⁶⁷: Ստեղծված պայմաններում անհրաժեշտություն էր առաջանում, որ Կիլիկիայում կայացած եկեղեցական ժողովների կանոնական որոշումները Չայաստանում կիրառելի դարձնելու համար այստեղ ևս ստանային ժողովական հաստատում, առավել ևս այնպիսիները, որոնք նախատեսված էին հայաստանյան հասարակության համար:

Սի 1243 թ. եկեղեցական ժողովի հրավիրման նպատակը հայաստանյան հասարակության, այդ թվում հոգևորականության շրջանում քրիստոնեական բարքերի խաթարումը կասեցնելն էր⁶⁸: Եկեղեցական ժողովների հրավիրման վերը նշված սկզբունքը, պայմանավորված բուն Չայաստանում կաթողիկոսական Աթոռի բացակայությամբ, ունեցավ միջնորդավորված կիրառություն: Տվյալ պարագայում, կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցին (1221-1268), չկարողանալով Սի 1243 թ. ժողովի որոշումներն անձամբ բերել Չայաստան, դա հանձնարարում է ժողովին մասնակից Վարդան Արևելցուն: Վերջինիս էլ հայաստանյան հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների օժանդակությամբ ձեռնամուխ է լինում այդ կանոնների իրականացմանը, որոնց մասին են վկայում ոչ միայն մի շարք վիճագիր արձանագրություններ, այլև Ձազալանից 1270 թ. եկեղեցական ժողովը, որին Չայոց կաթողիկոսի հրամանով մասնակցում էր նաև Վարդան Արևելցին:

Երրորդ գլուխը՝ «ԱՍՏԵՆՅՆ ԳԱՐՈՒԿՈՍՈՒԹՅԱՆ, ԳՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐԻԿ ՈՒ ԳՆԱՆՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԻԼԻԿԻՅԻ ԳՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՈՒՏԱՐԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», բաղկացած է երկու ենթադիտից:

Առաջին ենթադիտում՝ «Համակցության շրջան», վերլուծության է ենթարկված խնդրո առարկա փոխհարաբերությունների՝ Լևոն Ա-ի (1187-1219), Գեորգ Ա-ի (1226-1270) և Լևոն Բ-ի (1270-1289) գահակալման տարիներն

⁶⁷ Մերսես Շնորհալի, Թուրք ընդհանրական, 1865, էջ 422:

⁶⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 293-294:

ընդգրկող շրջափուլը: Այն, չնայած հակադրության որոշ դրսևորումների՝ ընդհանուր առմամբ հասկանալիվում է փոխհարաբերությունների կայունությանը:

Ինչպես հայտնի է, Կիլիկիայի հայոց թագավորները բուն Հայաստանում չունեին վարչաքաղաքական իշխանություն, ուստի հայաստանյան իշխանությունների հետ նրանց փոխհարաբերությունները կրում էին միջնորդավորված բնույթ և գլխավորապես իրականացվում Հայոց կաթողիկոսության միջոցով: Այսպես ձևավորվում էր փոխհարաբերությունների եռակողմ ձևաչափ, որտեղ կաթողիկոսությանը վերապահված էր կանոնակարգող կայն գործառնությունը: Պատահական չէ, որ ներկայացվող փոխհարաբերությունների առարկան կրել է առավելապես կրոնական բնույթ: Անկախ պետականության բացակայության պայմաններում Հայաստանի հոգևոր դասն ընդունում և ընդգծում էր կաթողիկոսության, ինչպես նաև Կիլիկիայում հաստատված հայկական անկախ թագավորության դերն ազգային ինքնության ու հայապահպանության գործում: XII դ. վերջն այդ առումով աչքի ընկավ լուրջ մարտահրավերներով, որպիսիք հունադավան և հռոմեադավան եկեղեցիների կողմից եկեղեցական միության շուրջ հայերին ներկայացվող պահանջերն էին: Չնայած ղեկավարություններին՝ հայոց իշխանություններին այնուամենայնիվ հաջողվեց ձևուն քաղաքականությամբ հասնել իրենց քաղաքական նկրտումների իրականացմանը, և այս գործում ծանրակշիռ էր Հայոց կաթողիկոսության դերակատարումը:

Հայոց եկեղեցու նվիրապետական առանձնահատկություններից ելնելով՝ դավանաբանական հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը վերապահված չէր միայն կաթողիկոսին, և այդ հարցում անհրաժեշտ էր հայաստանյան եպիսկոպոսական աթոռների համաձայնությունը ևս, քանզի կայացված լուրաբանչյուր որոշում հավասարապես վերաբերում էր նաև նրանց⁶⁹: Ուստի խնդրող առարկա փոխհարաբերություններում համակեցությունն ապահովող գլխավոր գործոնը կիլիկեցիների կողմից հունադավան և հռոմեադավան եկեղեցիների հետ հավասարակշռված քաղաքականության իրականացումն էր: Փոխհարաբերությունների կայունության խնդրում ծանրակշիռ էր նաև 1254 թ. հայ-մոնղոլական դաշինքը, և այդ կապակցությամբ Հեթում Ա-ի հայաստանյան իշխանությունների հետ երկիցս ունեցած հանդիպումը: Այս շրջափուլում առկա էր հայության երկու հատվածների կողմից միասնական ազգային շահի հստակ գիտակցում:

Երկրորդ ենթաօլիում՝ «Հավաղության շրջան», քննության է առնված մեզ հետաքրքրող փոխհարաբերությունների Հեթում Բ (1289-1293, 1295-1296, 1299-1305), Լևոն Գ (1305-1307) և Օշին (1307-1320) թագավորների գահակալման տարիներն ընդգրկող շրջափուլը, որը հանրկնկում է այսպես կոչված ունիթորական (միարարական) շարժման ծավալման հետ: Այս շրջանը բնորոշվում է փոխհարաբերություններում փոխադարձ անհանդուրժողականության և հակադրության դրսևորումներով:

Ներկայացվող փոխհարաբերությունների տեսանկյունից Հեթում Բ-ի կառավարումը բացասական առումով շրջադարձային նշանակություն ունեցավ: Դա պայմանավորված էր ինչպես թագավորի դավանական կողմնորոշմամբ, այնպես էլ XIII դ. վերջին երկրում ստեղծված ծանր կացությամբ, որից դուրս գալու նպատակով ելիոպական երկրներից ակնկալվող օգնությունն էր, որ

⁶⁹ Ներսես Շնորհալի, Թուրք ընդանրական, 1865, էջ 201:

ուղեմեջ կիլիկյան իշխանությունների լատինամետ քաղաքականությունը⁷⁰: Վերջինիս նկատմամբ անհաշտ վերաբերմունք էին դրսևորում հայաստանյան թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ իշխանությունները:

Կիլիկյան իշխանությունների և Հայոց կաթողիկոսության լատինամետ դիրքորոշման դեմ XIII դ. վերջին Հայաստանում պայքարող ուժերի շրջանում տեղի ունեցան վերադասավորումներ: Եթե XII դ. վերջից մինչև XIII դ. կեսերն ընկած ժամանակաշրջանում պայքարի դրոշակակիրներ էին Հաղբառի ու Սանահնի վանքերը, ապա դարավերջին այդպիսիք Սյունյաց մետրոպոլիտությունն ու Գլածորի համալսարանն էին: Վերջիններս, սակայն փոփոխություն չմտցրեցին այդ քաղաքականություն մինչև այդ ձևավորված ուղեգծի մեջ:

Քննվող փոխարաբերությունների վրա բացառաբար ազդեցին այս շրջափուլի այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են կաթողիկոս Կոստանդին Բ-ի (1286-1289) աթոռագրվումը, Սսի 1307 թ. և Ադանայի 1316 թ. եկեղեցական ժողովները, որոնցով, փաստորեն, ժողովական հաստատում էր սրվում Հռոմի կաթոնի առաջադրած պահանջներին: Սակայն հարկ է նշել, որ դրանք, թեև կանոնապես չօժտվեցին իրավական ուժով և համաարած կիրառություն չստացան, այդուհանդերձ կանխորոշեցին Հայոց կաթողիկոսության, Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների և Կիլիկիայի հայկական թագավորության փոխարաբերությունների հետագա ընթացքը ըստ էության հանգեցնելով դրանց դադարեցման:

Եզրույզումներ

Ի մի են բերված աստեմատության հիմնական պրոյուկներն ու եզրահանգումները:

1. Հայաստանում Ջաբարյանների ու նրանց ենթակա իշխանությունների ձևավորմամբ պայմանավորված քաղաքական գործընթացները մեծապես ազդեցին հոգևոր իշխանության և մասնավորապես եկեղեցական նվիրապետության վրա՝ նպաստելով դրանում տարբեր գերագահ կենտրոնների առաջացմանը: Այսպիսով, փաստվում է աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների շրջանում տեղի ունեցող գործընթացների փոխկապակցվածությունը:

2. Տիրապետելով հասարակական հարաբերությունների կանոնակարգման իրավական և բարոյական, ինչպես նաև տնտեսական լծակների եկեղեցին ծանրակշիռ մասնակցություն էր ունենում երկրի կառավարմանը: Դրան նպաստում էր այն հանգամանքը, որ գլխավորապես հոգևոր-եկեղեցական գործիչներն էին հեղինակում այդ հարաբերությունները կարգավորող կանոնական նորմերը: Հիշյալ լծակները միաժամանակ ծառայեցվում էին աշխարհիկ իշխանությունների հետ հարաբերություններում, որտեղ եկեղեցին մի կողմից՝ հանդես էր գալիս որպես աշխարհիկ իշխանության գաղափարական հենարան, կառավարման սկզբունքներ ուղեմշող, իսկ մյուս մյուս կողմից՝ գաղղ ուժի դերում: Առաջինի պարագայում մեծապես կարևորվում էր աշխարհիկ իշխանությունների հավաստումությունը քրիստոնեությանը, եկեղեցու ավանդներին: Որպես գաղղ ուժ՝ եկեղեցին օգտագործում էր հասարակական կարծիքի ձևավորման վրա ունեցած մեծ ազդեցությունը, որն էլ միաժամանակ ծառայեցնում էր պետական իշխանության և ժողովրդի փոխարաբերությունների կանոնակարգմանը:

⁷⁰ Մանանդյան Հ., Երկեր, հ. 9, էջ 321: Խաչիկեան Լ., Արտագի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը, էջ 53:

3. Կենտրոնաձիգ անկախ պետության բացակայությունը, մասնավորապես օտարի տիրապետության պայմաններում, առաջ բերեց թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունների՝ միևնույն իշխանական տոհմի ձեռքում կենտրոնացնելու անհրաժեշտություն: Պրազիսավոր նպաստակը հոգևոր իշխանության օժանդակությունը, մասնավորապես եկեղեցու ապահովությունն առավել արդյունավետ օգտագործելն էր: Այս երևույթն էլ Հայաստանում Բագրատունյաց թագավորության անկումից հետո ծնունդ տվեց պարոնտերության ինստիտուտին: Այն բնութագրող «պատրոն» եզրույթը սկզբնապես՝ XI-XII դդ., բնորոշում էր աշխարհիկ բարձրագույն իշխանությունը: Ասկայն XIII դ. սկզբից այն աստիճանաբար կորցնում է իր նախկին իմաստը և «պատրոն» հորջորջմամբ սկսում են հանդես գալ բարձրագույն իշխանություններից՝ տվյալ դեպքում Ջաքարյաններից ստորակայական կախում ունեցող իշխանությունների ներկայացուցիչները: Պա պայմանավորված էր Ջաքարյանների հաջող ազատամարտերով, որոնք լավագույնս նպաստեցին ավատատիրական իշխանությունների վերականգնմանն ու ամրապնդմանը՝ նրանց համար ապահովվելով պատրոնությունը բնորոշող գլխավոր հատկանիշը՝ իշխանությունը:

4. Պատրոնին և պատրոնությանը զուգահեռ XIII դ. աղբյուրներում սկսում են հիշատակվել «պարոն» և «պարոնություն» եզրույթները, որոնք հատկանշում էին իշխանների տիրական իրավունքները ոչ միայն աշխարհիկ տիրույթների, այլև վանքերի ու եկեղեցիների նկատմամբ: Այդ հիմքով է, որ աշխարհիկ պարոնները հանդես էին գալիս որպես վանքերի ու եկեղեցիների տերեր: Ասկայն կալվածքների ու հոգևոր հաստատությունների նկատմամբ աշխարհիկ պարոնների տիրական իրավունքները համարժեք չէին, քանզի վանքերն ու եկեղեցիներն ի սկզբանե պատկանել են Հայոց կաթողիկոսությանը:

5. Թեև պարոնության հիմնական իմաստն աշխարհիկ իշխանների կողմից վանքերի ու եկեղեցիների հովանավորությունն էր, այդուհանդերձ, այն ուղեկցվում էր վերջիններիս գործերին հովանավորների աննհայտ միջամտությամբ: Առավել տարածված էր աշխարհիկ պարոնների կողմից հոգևոր առաջնորդների նշանակումը: Պարոնության իրավունքը ևս փոխանցվում էր ժառանգաբար: Պաշտոնների ժառանգաբար փոխանցումը քննվող ժամանակաշրջանում լայնորեն տարածված էր նաև եկեղեցական միջավայրում: Արդյունքում եկեղեցական, մասնավորապես վիճակավոր առաջնորդներն իրենց կենդանության ժամանակ մոտ հարազատներից պթռռակցի կարգավիճակով ընտրում էին փոխանորդներ, ովքեր էլ հետագայում ժառանգում էին թեմի առաջնորդությունը: Ներկայացվող ժամանակաշրջանում որպես պարոններ հանդես են գալիս նաև հոգևոր իշխանության ներկայացուցիչները: Սա նշանակում է, որ նրանք օժտված են եղել նաև աշխարհիկ իշխանությամբ, այսինքն ունեցել են ժառանգական կալվածքներ, որոնց տիրել են սեփականության իրավունքով, իսկ «պարոններ» սիրողսով միայն XV դարում հանդես գալը բացատրվում է նրանով, որ քննվող ժամանակաշրջանում նրանց տոհմերի աշխարհիկ իշխանները դեռևս կենսունակ էին:

6. Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների կարևորագույն դրսևորումներից են եկեղեցական ժողովները, որոնք հետագուովող ժամանակաշրջանում պահպանել էին իրենց բարձրագույն օրենսդրական ու իրավակիրառ գործառույթները: Պապանվել էր նաև ժողովներին աշխարհիկ իշխանությունների պարտադիր մասնակցության

սկզբունքը: Վերջիններս, օգտագործելով իրենց իշխանական լծակները, արդյունավետորեն նպաստում էին ժողովական որոշումների իրագործմանը:

7. Սսի ու Լոռիի եկեղեցական ժողովները հրավիրվել են 1207 թ., իսկ Անիի ժողովը՝ 1207 թ. վերջերին կամ 1208 թ. սկզբներին: Ջաքարեի նպաստվել է սկզբանե հանդիսացել է բանակում եկեղեցու շարժական սեղանի կիրառման խաթարված սովորույթի վերականգնումը, ինչի համար էլ հոգևորականության խորհրդով դիմում է Գովհաննես Ձ Ասեցի կաթողիկոսին և Լևոն Ա թագավորին: Սակայն Ստում կայացված որոշումները, որոնցում կային հայոց դավանանքին հակասող դրույթներ, առաջ են բերում հայաստանյան հոգևորականության դժգոհությունը, որով էլ պայմանավորված՝ Լոռիի և Անիի ժողովներն ունենում են անկանոն ընթացք: Անիից են վրաց պատնագիտության այն անդումները, թե Ջաքարե ամիրսպասալարը, իբր իրականացնելով վրացական արքունիքի և եկեղեցու քաղաքականությունը, փորձել է Զայաստանում տարածել քաղկեդոնադավանություն: Միաժամանակ պատճառաբանված չէ վրաց պատնագիտության այն համոզումը, որի համաձայն՝ Զայաստանում ներկայացվող ժամանակաշրջանում դատական գլխավոր իշխանությունը պատկանել է վրաց արքունի մեծ վեզիր մծիգուբաթուխուցես-ձողունդիտելիին:

8. Կաթողիկոսական Աթոռի՝ Սեծ Զայքից դուրս գտնվելը դժվարացնում էր Կիլիկայում տեղի ունեցած հայոց եկեղեցական ժողովների որոշումների կիրառությունը Զայաստանում: Ուստի դրանք հաճախ ունենում էին միջնորդավորված կիրառություն: Այս սկզբունքով էր պայմանավորված Սսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնական նորմերի Զայաստանում ստացած կիրառությունը, որին իրենց նպաստն էին բերում հայաստանյան աշխարհիկ իշխանությունները՝ հաճախ գլխավորելով այդ գործընթացը: Ներկայացվող ժամանակաշրջանի եկեղեցական ժողովների քննած հարցերը հիմնականում կրել են եկեղեցական բնույթ, ինչը պատճառաբանվում էր նրանով, որ արդեն իսկ գոյություն ունեին հասարակական հարաբերությունների լայն շրջանակ կարգավորող կանոնական նորմերի այնպիսի ժողովածուներ, ինչպիսիք են «Կանոնագիրք Զայոցը» ու Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին»:

9. Ամենայն Զայոց կաթողիկոսության, Զայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների և Կիլիկիայի հայկական թագավորության փոխհարաբերությունները քննվող ժամանակաշրջանում բաժանվում են երկու շրջափուլի: Երկուսի դեպքում էլ անմիջական շփումների սակավությունը, որը մեծապես պայմանավորված էր թե՛ հեռավորությամբ և թե՛ ճանապարհների անապահովությամբ, ունեցավ բացասական հետևանքներ: Զարաբերությունների կայունությանը որոշակիորեն կնպաստեք կաթողիկոսների այցը Զայաստան, ինչին չենք հանդիսանում: Սույն փոխհարաբերություններում շրջադարձային նշանակություն ունեցավ Կիլիկիայի հայոց թագավորության հռչակումը, որի արդյունքում Զայոց կաթողիկոսական Աթոռն իր համահայկական իշխանության իրականացման գործում ստացավ զորեղ աջակցություն: Դրան նպաստում էր նաև այն, որ թագավորական իշխանությունը կաթողիկոսության օրինակով և նրա միջոցով փորձում էր իրացնել համահայկական իրավասություններ, որոնք, սակայն, կաթողիկոսականի հետ համարժեք չէին:

10. Խնդրո առարկա փոխհարաբերությունների ամբողջ ընթացքն աչքի ընկավ համակեցության և հակադրության դրսևորումներով: Երկուսի պարագայում էլ, ի թիվս այլ գործոնների, առավել կանխորոշիչ էր քրիստոնեական եկեղեցիների միության խնդրի վերաբերյալ Զայաստանում և

Կիլիկիայում առկա դիքորոշումների տարբերությունը: Եթե Կիլիկիայում, քաղաքական շահի թելադրանքից ելնելով, հակված էին որոշ, թեկուզ և աննշան գիջումների, ապա Հայաստանում դրանք համատեղելի չէին ազգային-քաղաքական շահերի հետ: Ուստի պատահական չէ, որ այս խնդրի շուրջ հակասությունների խորացումն ի վերջո հանգեցրեց կողմերի փոխհարաբերությունների դադարեցմանը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակումներում:

1. Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների թվագրման շուրջ, «Հայոց պատմության հարցեր», N 10, Երևան, 2009, էջ 50-59:
2. Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները, «Հայոց պատմության հարցեր», N 11, Երևան, 2010, էջ 20-44:
3. Ջաքարյան Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Լևոն Ա-ի իշխանության տարիներին (1187-1219), «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում», «Այսա» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 11-17:
4. Կիլիկյան Հայաստանի և Ջաքարյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Հեթում Ա-ի իշխանության տարիներին (1226-1270), «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, հ. Ա, Երևան, 2011, էջ 297-305:
5. Պարոնտերության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում (XI-XIV դդ.), ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, N 1, էջ 30-42:

Торосян Ваге Гамлетович

**ВЗАИМООТНОШЕНИЯ АРМЯНСКОЙ СВЕТСКОЙ И
ДУХОВНОЙ ВЛАСТЕЙ
(КОНЕЦ XII - НАЧАЛО XIV ВВ.)**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07. 00.01 “История Армении”.

Защита состоится 20 мая 2011 г. в 14⁰⁰ по адресу пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при институте истории НАН РА.

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена почти не исследованной и актуальной теме – отношениям между армянской светской и духовной властями с конца XII-го по начало XIV вв.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы. Во введении аргументируется научная новизна изучаемой проблемы. Далее представляются цели и задачи, а также хронологические рамки исследования, анализируются использованные источники и литература.

В первой главе - “Взаимоотношения светской и духовной властей в Армении” - освещаются вопросы формирования новых феодальных княжеств на значительно широких территориях Армении,

освобожденных от сельджукского ига и отношения между этими владьчествами. Акцентируются также основные черты духовной власти, в частности, иерархический строй Армянской церкви с характерными особенностями данного периода. Кроме этого, выявлены принципы, выдвинутые со стороны церкви относительно сущности и форм государственного управления. Оценен вклад духовной власти в укреплении государственности. Уточнены хронологические пределы формирования и развития церковного патроната, чем было обусловлено совмещение светской и духовной властей в феодальных княжествах. В этом контексте рассмотрены обстоятельства приобретения владьками патронского права над духовными заведениями и формы его проявления, а также присвоение патронского права духовенством.

Во второй главе - "Взаимоотношения светской и духовной властей в церковных соборах" - освещена роль армянских церковных соборов как в духовной, так и общественно-политической жизни армянского народа. В частности, уточнены даты Сисского, Лорийского и Анийского соборов и представлены важнейшие события, произошедшие в ходе этих собраний. Также сделана ссылка на некоторые канонические решения Сисского церковного собора 1243 года, которые были приняты и в Армении, в том числе на Дзаганском церковном соборе 1270 года.

В третьей главе - "Взаимоотношения Католикосата всех армян, светской и духовной властей Армении и Киликийского армянского государства" - проанализированы отношения между указанными сторонами в годы царствования Левона I (1187-1219), Хетума I (1226-1270) и Левона II (1270-1289). Несмотря на некоторые проявления противостояния сторон, указанный период в основном характеризуется стабильностью их взаимоотношений. Кроме того, эти взаимоотношения рассмотрены в период царствования Хетума II (1289-1293, 1295-1296, 1299-1305), Левона III (1305-1307) и Ошина (1307-1320). Данный этап характеризуется проявлениями взаимной нетерпимости и противостояния Католикосата всех армян, светской и духовной властей Армении и Киликийского армянского государства.

В заключении изложены основные итоги и выводы исследования.

TOROSYAN VAHE HAMLET

**THE RELATIONSHIP BETWEEN THE ARMENIAN SECULAR AND
SPIRITUAL AUTHORITIES
(FROM THE END OF THE XII CENTURY TO THE BEGINNING
OF THE XIV CENTURY)**

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of “History of Armenia” 07. 00.01.

The defense of the dissertation will be held on 20 May 2011, 14⁰⁰ in the Specialized Council № 004, operating at the Institute of History of National Academy of Sciences of RA (on the address Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The present study is dedicated to an almost untouched and an actual theme – the relations between Armenian secular and spiritual authorities from the end of the XII century to the beginning of the XIV century.

The work consists of an introduction, three chapters, a conclusion and a list of the used sources and literature. The scientific novelty is argued in the introduction. Then intentions and assigned tasks as well as chronological frames of the study are presented and the used sources and literature analyzed.

Questions on the formation of the new feudal principedoms upon the considerably large territories of Armenia liberated from the Seljukid rule and the relations between these principalities are enlightened in the first chapter of the study - “The Relationship between the Secular and Spiritual Authorities in

Armenia”. Also, accents are made on the main features of the ecclesiastical authority, especially on the hierarchical structure of the Armenian Church with its peculiarities inherent to the period under investigation. In addition, the concepts concerning the essence and forms of the rule over the country proposed by the Church are brought to light. The contribution of the ecclesiastical power to strengthening the Armenian statehood is evaluated in the work.

Times when the church patronage was formed and developed in Armenian reality as well as the combination of secular and ecclesiastical authorities within the feudal principalities that occurred as a result of such a patronage have been revealed and investigated. In this context, the circumstances of acquisition the right of the patronage by lords over the spiritual institutions and the forms of its usage as well as the appropriation of this right by the clergy are described and considered in detail.

In the second chapter - “The Relationship between the Secular and Spiritual Authorities in the Ecclesiastical Councils” - the role of such councils in both spiritual and political life of the Armenian people is enlightened. In particular, the dates of the ecclesiastical councils of Sis, Lori and Ani are specified and the important events that occurred during these meetings presented. Also, a reference is made to some canonical resolutions of the Sis council in 1243, which had also been adopted in Armenia in Dzagavan council in 1270.

The relationship of the Catholicosate of All Armenians both with the secular and spiritual authorities of Armenia and the Cilician Kingdom of Armenia during the reign of Levon I (1187-1219), Hetum I (1226-1270) and Levon II (1270-1289) is analyzed in the third chapter - “The Relationship between the Catholicosate of All Armenians and the Secular and Spiritual Authorities of Armenia and the Cilician Kingdom of Armenia”. Despite the fact that the said parties had some expressions of contradiction against each other, the mentioned period is basically characterized by the stability of relations between them.

Furthermore, the relationships between the above mentioned parties during the reign of Hetum II (1289-1293, 1295-1296, 1299-1305), Levon III (1305-1307) and Oshin (1307-1320) have been examined and estimated. This stage of Armenian history is characterized by occurrences of the mutual intolerance and confrontations between the Catholicosate of All Armenians and the secular and spiritual authorities of Armenia and the Cilician Armenian.

The main findings and results of the study are summarized in the conclusion.